24 սեպտեմբերի 2009 թ.

Նոր տեղեկություններ «Medi-Cal»-ի՝ «Չափահասների ցերեկային բուժսպասարկման» (Adult Day Health Care - ADHC) նպաստի մասին

«Medi-Cal»-ի հարգելի նպաստառու

«Department of Health Care Services»-ը վերջերս տեղեկացրել էր Ձեզ California-ի օրենքում տեղի ունեցած փոփոխության մասին, որի համաձայն՝ նպաստառուների համար «Adult Day Health Care» նպաստը կրճատվում էր մինչև շաբաթական առավելագույնը երեք օրվա:

2009 թ. սեպտեմբերի 10-ին *Brantley v. Maxwell-Jolly* (Case No. 4:09-cv-03798-SBA) գործով դաշնային դատարանի կողմից ընդունված որոշման շնորհիվ՝ ներկա պահին այդ կրճատումը **չի** կատարվի: Դուք կարող եք շարունակել այցելել Ձեր՝ չափահասների ցերեկային բուժսպասարկման կենտրոն շաբաթական այնքան օր, որքան հաստատված է Ձեր ներկա «Բուժման թույլտվության» (Treatment Authorization) մեջ:

Եթե հարցեր ունեք «Medi-Cal»-ի նպաստների մեջ տեղի ունեցած այս փոփոխության մասին, կարող եք դիմել Ձեր՝ ADHC-ի սպասարկողին կամ զանգահարել (916) 636-1980 հեռախոսահամարով: